

Թիւ 27215  
Մարտ 9, 1981

Արժանաշնորհ  
Տ. Գարեգին Էհնյ. Գասպարեան  
Հովիւ Ս. Յակոբ Նկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Ուեսթչէսթըր.

Սիրելի Տէր Գարեգին,

Ստացած ենք Փետրուար 24, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 8ին զուամարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը ի պայծառութիւն Ս. Նկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Կարօ Պաշեան  
Տորթ. Յակոբ Չեթինբայա  
Նդուարդ Մսայեան  
Յակոբ Խաչիկեան  
Ճան Ուլուհիմեան  
Փօլ Պաշեան